

Դատական Գործ N: ԵԱԴԴ/0041/01/08

Երբ է գործը ստացվել:	23-12-2008
Քրեական գործի համարը:	0041/01
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Նախաքննական գործի համարը:	58209308
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	շորթմամբ առևտրային կաշառք է ստացել
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Վոլոդյա
Ազգանուն	Ղուկասյան
Հայրանուն	Ծատուրի
Հասցե	Ջրվեժ Ա թաղամաս 54տուն
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	25-07-1949
Հոդված_1	
Հոդված	200 Մաս 4
Հոդված_1	
Հոդված	190 Մաս 1
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Վիճակագրական տողի համարը:	7.14
Իրեղեն ապացույց	
Իրեղեն ապացույցի անվանումը:	
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:	
Խափանման միջոց:	Ստորագրություն չիեռանալու մասին
Երբ:	23-12-2008
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Աջափնյակ և Դավթաշեն
Դատավորի անուն:	Արթուր Սմբատյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Աջափնյակ և Դավթաշեն
Դատավորի անուն:	

Երբ:	26-12-2008
Որոշումը ուղարկվել է կողմերին:	29-12-2008
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	29-12-2008
Այլ նշումներ:	
Երբ:	20-01-2009
Երբ:	23-01-2009
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր	
Անուն	Վոլոդյա
Ազգանուն	Դուկասյան
Հայրանուն	Ծատուրի
Հասցե	Զրվեժ Ա թաղամասի 54 տուն
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	25-07-1949
Հեռախոս	010-63-11-47, 091-40-09-51
Այլ նշումներ:	
Ժամ:	11-00
Ամսաթիվ:	23-01-2009
Ամսաթիվ:	23-01-2009
Հոդված	
Հոդված	ՀՀ քր. օր-ի 190-րդ Մաս 1-ին
Հոդված	
Հոդված	ՀՀ քր. օր-ի 200-րդ Մաս 4-րդ
Այլ:	
Հիմնական:	Տուգանք
Լրացուցիչ:	
Այլ:	
Դատական ակտի բովանդակությունը:	ԵԱԴԴ/0041/01/08 Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 23.01.2009թ. ք.Երևան Երևան քաղաքի Աջաինյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը

Նախագահությամբ դատավոր՝ Արթուր Սմբատյանի
Քարտուղարությամբ Գայանե Հովսեփյանի
Մասնակցությամբ
Մեղադրող Հովսեփ Սարգսյանի
Ամբաստանյալ Վոլոդյա Ղուկասյանի
Պաշտպան Յուրիկ Խաչատրյանի

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով գործն ըստ մեղադրանքի Վոլոդյա Ծատուրի Ղուկասյան՝ ծնված 25.07.1949թ. Գորիսի շրջանի Յայջի գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ-մասնագիտական կրթությամբ, ամուսնացած, խնամքին ոչ ոք, չհատված, աշխատում է «Արարատ - Լադա» ՓԲԸ-ում, որպես փոխտնօրեն, հաշվառված է Երևան, Նորքի 5-րդ միկրոշրջան, Մառի փողոց 11-րդ շենք, թիվ 49-րդ հասցեում, բնակվում է Ջրվեժ «Ա» թաղամասի 54-րդ տուն, խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին: Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով: Դատաքննությամբ դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ ԱԱԾ Քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝ Ա. Թևանյանի կողմից 2008 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 58209308 քրեական գործը: Նախաքննության մարմինը 2008 թվականի նոյեմբերի 28-ին Վոլոդյա Ծատուրի Ղուկասյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա հանդիսանալով «Արարատ - Լադա» ՓԲ ընկերության փոխտնօրեն, առևտրային կազմակերպության կառավարչական գործառույթներ իրականացնող ծառայող, 2006 թվականի հունվարի 23-ին, շորթմամբ, 10 000 ԱՄՆ դոլար առևտրային կաշառք է ստացել ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի տնօրեն՝ Համլետ Ասատրյանից, ընկերության Սևանի մասնաձյուղի շենք - շինությունները բալանսային արժեքով վաճառելու համաձայնության համար և այդ գումարի ծագման աղբյուրը թաքցնելու նպատակով, այն «Արարատ - Լադա» ՓԲ ընկերության տնօրեն և «Կարկոմավտո» ՍՊ ընկերության բաժնետեր Կարեն Շախմուրադյանի անվամբ, որպես փոխառություն, «Կարկոմավտո» ՍՊ ընկերության դրամարկղ մուտքագրելու միջոցով, օրինականացրել է հանցավոր ձանապարհով ստացված եկամուտները: «Արարատ - Լադա» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի նախկին տնօրեն Համլետ Ասատրյանը, ընկերության տնօրեն Ռաֆիկ Շախմուրադյանի հետ, նրա կենդանության ժամանակ, դեռևս 2003 - 2004 թվականներն, ունեցել է բանավոր պայմանավորվածություն՝ մասնաձյուղի շենք - շինությունները հաշվեկշռային արժեքով իրեն սեփականաշնորհելու վերաբերյալ: Ռաֆիկ Շախմուրադյանի մահվանից հետո՝ 2005 թվականի վերջին այդ հարցով նա դիմել է ընկերության տնօրենի պարտականությունները ստանձնած նրա որդուն՝ Կարեն Շախմուրադյանին, որն ընդունելով նախկին պայմանավորվածությունը, հանձնարարել է Ընկերության փոխտնօրեն Վոլոդյա Ղուկասյանին կատարել անհրաժեշտ ձևակերպումներ: Վերջինս, Համլետ Ասատրյանին հայտնելով, որ շենք-շինությունների շուկայական արժեքն անհամեմատ բարձր է հաշվեկշռային արժեքից, դրանք հաշվեկշռային արժեքով նրան վաճառելու և բարձր արժեքով այլ անձի չվաճառելու համար, իր նախաձեռնությամբ, պահանջել է 10 000 ԱՄՆ դոլար կաշառք: Համլետ Ասատրյանը, ընդունելով առաջարկը, 10 000 ԱՄՆ դոլարը հանձնելու համար 2006 թվականի հունվարի 23-ին այցելել է Վոլոդյա Ղուկասյանի աշխատասենյակ: Վերջինս, տեղեկանալով պահանջված գումարը բերելու մասին, այն ստանալու համար աշխատասենյակ է հրավիրել ընկերության գանձապահ Սուսաննա

Գևորգյանին, ով, Վոլոդյա Ղուկասյանի հանձնարարությամբ առձեռն ստանալով 100 հատ ԱՄՆ դոլարանոց թղթադրամներից բաղկացած գումարը, այն փոխարկել է ՀՀ դրամի և 4 600.000 դրամը մուտքագրել «Կարկոմավտո» ՍՊ ընկերության դրամարկղ՝ որպես փոխառություն այդ ՍՊ ընկերության բաժնետեր Կարեն Շախմուրադյանի անունից, որով իսկ Վոլոդյա Ղուկասյանը հետապնդել է ստացված գումարի հանցավոր ծագումը թաքցնելու, գտնվելու վայրը և տնօրինման եղանակը խեղաթյուրելու նպատակ: Պայմանավորվածության համաձայն Համլետ Ասատրյանը նույն օրը «Արարատ-Լադա» ընկերության դրամարկղ է մուծել Սևանի մասնաձյուղի շենք-շինությունների հաշվեկշռային արժեքը՝ 1 728 000 դրամ և ստացել ՓԲ ընկերության բաժնետերերի ժողովի 20.01.2006 թվականի որոշումը՝ մասնաձյուղի շենք-շինություններն իրեն վաճառելու վերաբերյալ, սակայն շինությունների հողատարածքների մասնավորեցման համար պահանջվող պետական գանձումների վճարման անհրաժեշտ գումար չունենալու պատճառով, սեփականության իրավունքը չի կարողացել գրանցել ՀՀ անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի Սևանի տարածքային բաժնում, այսինքն շորթամբ առևտրային կաշառք ստանալու և հանցավոր ձանապարհով ստացված եկամուտները փոխարկման ու փոխանցման միջոցով օրինականացնելու /փողերի լվացման/ համար:

Կատարված հանցանքի համար Վոլոդյա Ղուկասյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ և 190-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործը 23.12.2008 թվականին մեղադրական եզրակացությամբ մուտք է եղել դատարան:

Մինչ դատաքննություն սկսելն ամբաստանյալ Վոլոդյա Ղուկասյանը միջնորդեց դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարեց, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննությունն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ և առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում:

Դատարանը, համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1 և 375.2 հոդվածներով նախատեսված պայմանները, որոշում է կայացրել արագացված դատական քննություն անցկացնելու մասին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3 հոդվածի 5-րդ մասի՝ «Դատարանն արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարում: Սակայն ուսումնասիրում է ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքերը»:

Դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները՝ մեղադրյալի, վկաների ցուցմունքները, «Կարկոմավտո» ՍՊԸ-ի թիվ 000255 դրամարկղային մուտքի օրդերը և այդ օրդերի անդորրագիրը, «Արարատ-Լադա» ընկերության 2006 թվականի դրամարկղային գրքի 2008 թվականի հոկտեմբերի 10-ի գննության արձագրությունը, Համլետ Ասատրյանի կողմից 27.11.2008 թվականին ներկայացրած 23.02.2008 թվականի թիվ 9 հաշիվ-ապրանքագիրը, ՀՀ ռստիկանության ԿՀՂՊ ԳՎ կողմից նախապատրաստված նյութերը և ծայնագրված լազերային սկավառակը, 2005 թվականի օգոստոսի 4-ի նվիրատվության պայմանագիրը, զննման արձանագրությունը և այլն, գտնում է, որ ամբաստանյալը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

Վոլոդյա Ղուկասյանը ենթակա է պատժի՝ կատարածի համար: Դատարանն ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս

հաշվի է առնում ինչպես կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա անձը բնութագրող տվյալները՝ այն, որ դատված չի եղել /h-2 գ.թ 34/, բնութագրվում է դրական /h-2 գ.թ 24/:

Ամբաստանյալի պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ չկան:

Ղատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով, պետք է պատիժ նշանակել տուգանքի ձևով, քանի որ արարքը կատարելու պահին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան նախատեսել է նաև պատժի այդ տեսակը, իսկ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով և ըստ նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, ղատարանը գտնում է, որ որպես եկամուտ պետությանը պետք է հանձնել «Կառկոմավտո» ՍՊԸ-ի հաշվապահական հաշվառման թիվ 513 հաշվում /փոխառություն/, որպես կրեդիտորական պարտք, հաշվառված 4 600 000 ՀՀ դրամ գումարը:

Անդրադառնալով իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերի և լազերային սկավառակի տնօրինման հարցին, ղատարանը ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով գտնում է, որ դրանք պետք է պահել քրեական գործում:

Քննության առնելով ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը, ղատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360-րդ, 365-րդ, 369-372-րդ հոդվածներով և 3753 հոդվածի 6-րդ մասով ղատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Ամբաստանյալ Վուրդյա Ծատուրի Դուկասյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 2-րդ մասի կանոններով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ նշանակել տուգանք՝ ՀՀ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի /300.000 ՀՀ դրամ/ չափով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասով նշանակել պատիժ տուգանք՝ ՀՀ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի /400.000 ՀՀ դրամ/ չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի կանոններով վերջնական պատիժ նշանակել տուգանք՝ 700.000 ՀՀ դրամ:

	<p>ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ կետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, որպես եկամուտ, պետությանը հանձնել «Կառկոմավտո» ՍՊԸ-ի հաշվապահական հաշվառման թիվ 513 հաշվում /փոխառություն/, որպես կրեդիտորական պարտք հաշվառված 4 600 000 ՀՀ դրամ գումարը: Իրեդեն ապացույց ճանաչված փաստաթղթերը և լազերային սկավառակը պահել քրեական գործում: Խախտման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողնել անփոփոխ: Ղատակձիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան հրապարակվելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում:</p> <p>ԴԱՏԱԿՈՐ Ա. ՍՄԲԱՏՅԱՆ</p>
Ամսաթիվ:	27-02-2009
Գործը հանձնվել է գրասենյակ:	11-03-2009
Էջերի քանակ:	173
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	